Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10 հուլիսի 2015թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցում էր տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը:

Օրակարգում՝

1. **Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին.**

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյան/

2. **Մարզում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների և առկա խնդիրների մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. **Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ու կանոնների պահպանման վիճակի և խնդիրների մասին**

/ Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյան/

4. **Հանրակրթության ոլորտում իրականացված աշխատանքների և առաջիկա անելիքների մասին:**

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյան/

Մարզխորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը:

Օրակարգի առաջին՝ ,,Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի *մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյանը:*

Օրակարգի երկրորդ՝ ,,Մարզում իրականացված գյուղատնտեսական աշխատանքների և առկա խնդիրների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ ,,Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ու կանոնների պահպանման վիճակի և խնդիրների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյանը:

Օրակարգի չորրորդ՝ ,, Հանրակրթության ոլորտում իրականացված աշխատանքների և առաջիկա անելիքների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով և հարցադրումներով հանդես Հալիձոր համայնքի ղեկավար Մարատ Գերասիմյանը,Եղվարդ համայնքի ղեկավար Սպարտակ Զաքարյանը և Քաջարանի քաղաքապետ Վարդան Գևորգյանը: Հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Բագրատ Զաքարյանը:

Մարզխորհրդի նիստում ելույթ ունեցան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Կարապետյանը և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքները ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55